ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄՏԵՂԱԿԱՆՏՈՒՐՔԵՐԻԵՎՎՃԱՐՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում տեղական տուրքերը և վճարները /օրենքի նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածում/: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև կիրառելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդև 14-րդ հոդվածներիպահանջները՝ որոշման նախագծով սահմանվել են Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են, ըստ տուրքերի տեսակների, տուրքերի նվազագույն և առավելագույն դրույքաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են, վճարների տեսակների,ըստ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի:

Նախագծում հիմք ընդունելովՎաղարշապատ համայնքի մեջ մտնող բնակավայրերի առանձնահատկությունները կիրառվել են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դրույթները:

Ելնելով ներկա սոցիալ-տնտեսական վիճակից, նպատակ ունենալով աջակցելուև մեղմացնելուհամայնքում պաղպաղակի բացօթյա առևտրով զբաղվող տնտեսվարողների, տնային կենդանիներ պահող անձանց ու մարդատար-տաքսու ծառայություններ մատուցող անձանց վիճակը և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, ավագանին իր այս նախագծով որոշել է նաև.

թիվ 1 հավելվածի 8-րդ կետով սահմանված համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ պաղպաղակի բացօթյա առևտուրի տուրքի դրույքաչափը նվազեցնել՝ կիրառելով 0,5 գործակիցը,

թիվ 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված համայնքի վարչական տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվության համար սահմանել արտոնություն՝ տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումով,

թիվ 1 հավելվածի 14-րդ կետով սահմանված համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրենքով սահմանված տուրքի դրույքաչափը նվազեցնել՝ կիրառելով 0,75 գործակիցը:

Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտության վերաբերյալ Վաղարշապատ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել և դրույքաչափերը սահմանվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

2022 թվականի համար համայնքում սահմանված տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ ավագանու համապատասխան որոշումը ընդունելուց հետո կիրականացվի բյուջեի կազմման եկամտային մասի ճիշտ պլանավորումը: